

ԼԻԼԻԹ ՍՈՒՐԱԴՅԱՆ

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և
իրավունքի ինստիտուտի պետաիրավական
հետազոտությունների բաժնի հայցորդ

ՆՈՐՄԱՍՏԵՂԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՍՍՇԽԱՐՀԱՅԻՆ ՓՈՐՁԻ ՊԱՏՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Հոդվածում հեղինակը խորքային վերլուծության է ենթարկել իրավաստեղծ գործունեության պատմական զարգացման ընթացքում կուտակված դրական փորձը, ինչպես նաև ներկայացրել է իրավաստեղծ գործունեության համաշխարհային փորձի ձեռքբերումների հնարավոր կիրառման ուղիները ազգային իրավաստեղծ գործունեության բնագավառում:

Հիմնաբառեր- իրավաստեղծ գործունեություն, համաշխարհային փորձ, իրավունքի աղբյուր, օրինաստեղծություն, իրավակիրառ գործունեություն, դատական պրակտիկա:

Իրավաստեղծ գործունեության պատմությունն անցել է երկար ու ձիգ ժամանակաշրջան, որի ընթացքում սովորության կամ նախապետական իրավունքը հիմնականում փոխարինվել է օրենսդրական կամ պետական օրենսդրական իրավունքի: Ընդհանրապես իրավունքի պատմությունը միշտ չէ, որ ուղղափառ է վերընթաց շարժում է եղել (բավական է հիշել 20-րդ դարի բռնատիրական վարչակարգերի «իրավունքը»), սակայն այն ապահովել է քաղաքակիրթ հասարակության առաջընթացը:

Իրավաբանական գրականության մեջ տարբերակում են իրավունքի պատմական զարգացման հետևյալ երկու հիմնական շրջանները՝ մինչօրենսդրական իրավունք և օրենսդրական իրավունք: Առաջինը բնութագրվում է որպես բռնացրի իրավունքի (Faustrecht), իսկ երկրորդը՝ քաղաքակիրթ մասնավոր և հանրային իրավունքի շրջան¹:

20-րդ դարի հայտնի իրավաբան Հանս Էլեզենը տարբերակել է իրավունքի պատմական զարգացման երեք ձև՝ նախապետական, պետական և վերպետական (միջազգային)²: Նախապետական իրավունքը՝ նախնադարյան-համայնական սովորության իրավունքն է, որը իրավունքի սկզբնական ձևն էր³: Իրավաբանական գրականության մեջ այդ իրավունքը բնութագրում են չզարգացած և չզրված իրավունք: Սովորության իրավունքը ձևավորվել է հասարակության երկարատև զարգացման ընթացքում: Հասարակության կողմից անընդմեջ գործադրվելու հետևանքով սովորույթը ձեռք է բերում հեղինակություն և համընդհանուր ճանաչում և ծառայում է որպես հասարակական հարաբերությունների կարգավորիչ: Գրավոր իրավունքը կամ օրենսդրական իրավունքը ձևավորվել է մեզ հայտնի առաջին պետությունների՝ Միջագետքի, Եգիպտոսի, Չինաստանի, Հնդկաստանի, Հայաստանի, Իրանի, և հատկապես, Հին Աթենքի, Հին Հռոմի քաղաքակրթությունների առաջացման հետ⁴: Նշված բոլոր քաղաքակրթություններում սկզբնական շր-

ջանում իրավաստեղծ գործունեությամբ զբաղվում էին միայն քրմերը: Քրմական դասի մենաշնորհն էր օրենքների նախագծերի մշակումը, ինչպես նաև արդարադատության գործառույթի իրականացումը:

Պետական իշխանության ամրապնդմանը զուգընթաց աստիճանաբար իրավաստեղծ գործունեությունը և դատական գործառույթը կենտրոնանում է աշխարհիկ իշխանության ձեռքում:

Առաջին գրավոր օրենսդրական ակտերը երևան են եկել հնագույն քաղաքակրթություններում՝ Միջագետքում (Ուր - Նամուի օրենքների ժողովածուն մ.թ.ա. 3-րդ հազ. վերջը, Համուրայիի օրենսգիրքը՝ 1750թ.մ.թ.ա.), Հնդկաստանում (Մանուի օրենսգիրքը՝ վերջնական խմբ. 2-րդ դ.), Չինաստանում (օրենսդիրների դպրոցը՝ մ.թ.ա. 5-4-րդ դարեր): Հին հրեական իրավունքը նույնպես մեզ հասած առաջին գրավոր իրավական աղբյուրներից է և ամրագրված է Հին Կտակարանում (Մովսիսական օրենքները)⁵:

Սակայն պատմական փորձի իմաստավորման տեսանկյունից, մեր կարծիքով, անհրաժեշտ է հանգամանորեն կանգ առնել հռոմեական իրավաստեղծ գործունեության ու իրավական տեսական հայեցակարգի վրա, քանզի վերջինս էական և որոշիչ ազդեցություն է ունեցել իրավունքի հետագա զարգացման, ինչպես նաև մայրցամաքային իրավական համակարգի ձևավորման վրա: Չնայած պատմական երկար ժամանակաշրջանի, որը մեզ բաժանում է Հին Հռոմից, այնուհանդերձ հռոմեական իրավաբանների մշակած իրավական հայեցակարգը դարերի ընթացքում ոչ միայն չի կորցրել գիտական-տեսական նշանակությունը, այլև գործնական-կիրառական ուղղվածությունը: Իհարկե, հռոմեական իրավական հայեցակարգի ձևավորման վրա նշանակալի ազդեցություն է ունեցել հունական իրավաքաղաքական միտքը⁶:

Հռոմեական իրավունքի համակարգը ձևավոր-

վել է երկարատև իրավական պրակտիկայի և իրավագիտության մշակումների շնորհիվ ու տարբերվում է ժամանակակից իրավունքի ճյուղային համակարգից: Հռոմեական իրավական ինստիտուտների և նորմերի դասակարգման որակական հատկանիշը իրավունքի բաժանումն էր մասնավորի (jus privatum) և հանրայինի (jus publicum):

Հանրային իրավունքը, ըստ հռոմեացի նշանավոր իրավաբան Ուլպիանոսի, «վերաբերում էր հռոմեական պետության իրավական դրությանը» (ad statum rei Romanae spectat), իսկ մասնավոր իրավունքը վերաբերում է «առանձին անձանց շահերին» (ad singulorum utilitatem): Այսպիսով, հանրային և մասնավոր իրավունքի միջև եղած տարբերության չափանիշը, Ուլպիանոսի կարծիքով, իրավունքով պաշտպանված շահերի բնույթն է:

Մասնավոր կամ քաղաքացիական իրավունքի գործունեության բնագավառը Հին Հռոմում չափազանց լայն էր: Քաղաքացիական-իրավական էին համարվում նաև այնպիսի հարաբերություններ որոնք այլ իրավական համակարգերում դասվում էին հանրային - իրավական հարաբերությունների շարքին: Օրինակ, գողությունը հռոմեական իրավունքում համարվում էր մասնավոր իրավախախտում (delictum privatum) և այլն:

Հանրային իրավունքի համար գոյություն ունեն հետևյալ սկզբունքը. «հանրային իրավունքի նորմերը չեն կարող փոփոխվել առանձին անձանց համաձայնությամբ» (jus publicum privatorum pactis mutari non potest): Իրավաբան Ուլպիանոսի կարծիքով հանրային իրավունքը կարգավորում է կրոնական պաշտամունքի հարցերը, քրմերի իրավական դրությունը, մագիստրատների իրավունքներն ու պարտականությունները:

Հանրային իրավունքը, արտահայտելով հռոմեական ժողովրդի շահերը, սահմանում էր պետության և նրա մարմինների իրավական դրությունը, տարբեր դասերի իրավական վիճակը, ինչպես նաև կարգավորում էր հանցագործության և պատժի հարցերը: Գրա համար էլ ավանդաբար այդ բնագավառում ներառված էին այնպիսի ինստիտուտներ և սկզբունքներ, որոնք ամրագրում են երկրի պետական իշխանության կառուցվածքը, պետական մարմինների և պաշտոնատար անձանց լիազորությունները, ֆինանսահարկային ոլորտի հարցերը և այլն: Այստեղից էլ հանրային իրավունքին բնորոշ են իմպերատիվ նորմերը որոնք սահմանում են որոշակի պարտադիր վարքագծի կանոններ և որոնցից շեղումն անթույլատրելի է:

Հռոմեական մասնավոր իրավունքի բնագավառը ներառում էր այնպիսի նորմեր և ինստիտուտներ, որոնք կարգավորում էին քաղաքացիական ոլորտի հարաբերությունները և այդ նորմերին բնորոշ էր դիսպոզիտիվությունը, որը հնարավորություն էր տալիս անձին ինքնուրույն որոշելու իր հարաբերությունները մասնավոր բնագավառում: Անձն իրավունքը բնագավառում: Անձն իրավունքը բնագավառում: Անձն իրավունքը բնագավառում:

որոշ էր դիսպոզիտիվությունը, որը հնարավորություն էր տալիս անձին ինքնուրույն որոշելու իր հարաբերությունները մասնավոր բնագավառում: Անձն իրավունք ունի ինքը որոշելու իր հարաբերությունների բնույթն ու ծավալը ուրիշների հետ՝ ամուսնաընտանեկան, սեփականության, ժառանգության, պարտավորական հարաբերություններում և այլն:

Ժամանակի ընթացքում մասնավոր իրավունքում ձևավորվեց իրավունքի ինստիտուցիոնալ կառուցվածքը՝ անձինք, գույք և հայցեր: Իրավունքի ինստիտուցիոնալ կառուցվածքը աննշան փոփոխությամբ (անձինք, գույք, պարտավորություններ) ընդօրինակեց 1804 թվականի ֆրանսիական քաղաքացիական օրենսգիրքը:

Գոյություն ունի նաև իրավական նորմերի շարադրման, այսպես կոչված, պանդեկտային համակարգը, որը ձևավորվել է 16-րդ դարում, գերմանացի իրավաբանների կողմից: Այդ համակարգը բաղկացած է մեկ ընդհանուր և չորս հատուկ բաժիններից: Ընդհանուր մասում խոսվում է մասնավոր իրավունքի սուբյեկտի, օբյեկտի, պարտավորությունների ծագման, փոփոխման ու դադարեցման և մասնավոր իրավունքի պաշտպանության (հայցերի) մասին: Հատուկ մասը բաղկացած է մասնավոր իրավունքի առանձին ինստիտուտներից՝ գույքային իրավունք, պարտավորական իրավունք, ամուսնաընտանեկան իրավունք և ժառանգական իրավունք:

Պանդեկտային համակարգը առավել բարդ և կատարյալ է, այն բնորոշ է ժամանակակից զարգացած իրավական համակարգերին:

Հռոմեական իրավական համակարգի կարևորագույն առանձնահատկություններից է նաև նյութական և պրոցեսուալ իրավունքի ոչ հստակ տարաբաժանումը, որը բնորոշ է ժամանակակից իրավական համակարգերին: Բացի դրանից, հռոմեական մասնավոր իրավունքը, ըստ էության, հայցային իրավունքն էր՝ իրավունքի սուբյեկտի իրավազորությունն էր իրավական պահանջների սահմանված ձևերով, իր խախտված իրավունքների պաշտպանության իրականացումը դատարանում: Նյութական իրավունքի բովանդակության և դրա դատավարական պաշտպանության անխզելի կապը ընկած էր ողջ հռոմեական իրավական մշակույթի հիմքում:

Հռոմեական իրավական համակարգի բնորոշ գծերից է նաև իրավական նորմերի սահմանազատումը՝ ըստ բնույթի, ըստ նորմատիվ բովանդակության և ըստ գործողության ծավալի:

Ըստ բնույթի, իրավական նորմերը կարող են մարմնավորել խիստ իրավունքը (jus strictum) կամ արդարացի իրավունքը (jus aequum et bonum): Առա-

ջինի դեպքում ճշգրտորեն ամրագրվում են իրավական նորմի պահանջները և չի թույլատրվում դրանցից որևէ շեղում, իսկ երկրորդի դեպքում՝ ամրագրվում է միայն իրավական լուծման ընդհանուր սկզբունքը և թույլատրվում են որոշակի շեղումներ՝ կախված կոնկրետ հանգամանքներից և իրավահարաբերության մասնակիցների կամարտահայտությունից:

Ըստ նորմատիվ բովանդակության, իրավական նորմերը լինում են իմպերատիվ (*jus cogens*) և այլընտրանքային (*jus dispositivum*): Իմպերատիվ նորմերը բացառում են իրավահարաբերության մասնակիցների ազատ վարքագծի դրսևորման տարբերակը (օրինակ՝ քաղաքացիների և պետության փոխհարաբերությունը, ինչպես նաև հասարակական նշանակություն ունեցող քաղաքացիական կյանքի առանձին ինստիտուտները կարգավորող նորմերը՝ ամուսնության պայմանները, երեխաների դաստիարակությունը, հայրիշխանության ենթարկվելը, բարոյական նորմերի պահպանումը և այլն):

Դիսպոզիտիվ նորմերը իրավահարաբերության մասնակիցներին ազատ ընտրության հնարավորություն են ընձեռում (օրինակ՝ տարբեր տեսակի գործարքների կնքումը և այլն): Ըստ իրավական գործողության ծավալի, իրավական նորմերը բաժանվում էին ընդհանուր իրավունքի (*jus generale*) և բացառիկ կամ հատուկ իրավունքի (*jus speciale*):

Ընդհանուր իրավունքն արտահայտում է իրավունքի աղբյուրի ընդհանուր իմաստը՝ այս կամ այն հարաբերությունը կարգավորելու դեպքում: Այդ նորմերը սովորաբար կիրառվում են այն ժամանակ, երբ բացակայում են տվյալ հարաբերությունը կարգավորող հատուկ նորմերը: Հատուկ նորմերը նախատեսված են կոնկրետ հարաբերությունների համար և չեն կարող իրավունքի անալոգիայի աղբյուր հանդիսանալ, այսինքն՝ կարգավորել նաև այլ համանման հասարակական հարաբերություններ:

Իրավական նորմերի այսպիսի դասակարգում գոյություն ունի նաև ժամանակակից իրավական համակարգերում և անվերապահորեն վկայում է հռոմեական իրավական մշակույթի և իրավական համակարգի բարձր մակարդակի մասին:

Հռոմեական իրավական մշակույթում իրավունքը (*jus*) ուներ տարբեր իմաստներ՝ Իրավունք կարող էին նշանակել համակեցության ընդհանուր կանոններն ի տարբերություն բարոյականությանը և սովորույթին: Իրավունք կարող էր նշանակել որոշակի հասարակական և պետական դրություն՝ ի տարբերություն անիրավչության: Եվ, վերջապես, իրավունքը կարող է մերվել առավել ընդհանուր

հասկացության՝ իրավակարգի հետ:

Այդ նույն տերմինով՝ *jus*-ով, կարող է նշանակել նաև իրավական նորմերի համակցություն, որոնք տարբերվում են ըստ իրենց աղբյուրի՝ աստվածային իրավունք և մարդկային իրավունք, ըստ իրենց ձևական բնույթի՝ գրված իրավունք և չգրված իրավունք, ըստ պատմական նշանակության՝ հին իրավունք և նոր իրավունք: *Jus*-ը նշանակում էր նաև սուբյեկտիվ իրավունք՝ որևէ մեկի իրավունքը, արտահայտելու իր կամքը կտակի, գույքի նկատմամբ կամ խնամակալից հրաժարվելը և այլն:

Չնայած իրավունքի վերոնշյալ բազմազան նշանակությանը և նրանում արտահայտված հարկադրականությանը, ըստ հռոմեական իրավաբանների, իրավունքը պետք է համապատասխանի նաև մի շարք հիմնական չափանիշների: Այդպիսի հիմնական չափանիշներից է համամարդկային նպատակահարմարությունը: «Իրավունքը ստեղծված է ոչ թե եզակի անհատների, այլ համընդհանուր նշանակության համար»: Այնուհետև, իրավունքը պետք է արտահայտի հասարակական համաձայնության յուրահատուկ չափը այս կամ այն հարցերի վերաբերյալ. «Բոլոր իրավունքները ստեղծվում են համաձայնությամբ, կամ անհրաժեշտությամբ, կամ էլ ամրագրվում են սովորույթով»: Եվ, վերջապես, անտիկ փիլիսոփայության ազդեցության շնորհիվ իրավունքի բովանդակության մեջ ներարկվեցին արժեքային պատկերացումներ. «Ամրագրված իրավունքի էությունն է ազնիվ ապրել, չվիրավորել ուրիշին, յուրաքանչյուրին հատուցել ըստ արժանվույն», որը բնական իրավունքի կարևորագույն կանխադրույթներից է:

Ի տարբերություն աստվածային իրավունքի և բնական իրավունքի, գրված իրավունքի հիմնական չափանիշը համարվում էր նրա կոնկրետ արտահայտությունը իրավական նորմերի տեսքով, որոնք կիրառվում էին իրավական պրակտիկայում:

Մեր հետազոտության առարկայի տեսանկյունից հատկապես կարևոր տեսական նշանակություն ունի օրենքի (*Lex*) վերաբերյալ հռոմեական իրավաբանների մշակած հայեցակարգը, որն իր շատ կողմերով ունի նաև կիրառական նշանակություն: Այսպես, դեռևս Հանրապետության շրջանում (509-27թթ.մ.թ.ա.) ձևավորվում է գրավոր օրենսդրությունը (*leges*): Օրենքը (*lex*) ընդունվում է ժողովրդական ժողովի կողմից: Հասարակության զարգացմանը զուգընթաց գրավոր օրենքը մեծ նշանակություն ձեռք բերեց:

Հանրային իրավունքի բնագավառում իրավական կարգադրագրերի հիմնական ձևը Հին Հռոմում օրենքն էր (*lex*)¹¹: Օրենք չէր կարող համարվել ցանկացած նորմատիվ ակտ, եթե նույնիսկ այն ընդունել էր պետական իշխանության համապատաս-

խան մարմինը: Որպեսզի այդ ակտն օրենքի դրական հատկանիշներ ունենար, այն պետք է օժտված լիներ համապատասխան նորմատիվ բովանդակությամբ և ընդունված լիներ սահմանված կարգով: Ընդհանուր սահմանման համաձայն «օրենքը՝ ընդհանուր բովանդակությամբ որոշում է, որը մագիստրատի առաջարկությամբ ընդունել է ժողովրդական ժողովը և հաստատվել է Սենատի կողմից»:

Օրենքի (lex), որպես պոզիտիվ իրավունքի բարձրագույն և կատարյալ ձևի չափանիշ, հռոմեացիները համարում էին ժողովրդական ժողովի կողմից ընդունվածը¹²: Ժողովուրդը (populus) այստեղ հասկացվում է որպես սուվերեն կոլեկտիվ (civitas), հետևաբար, օրենքը՝ սուվերեն ժողովրդի կամքի իրավական արտահայտության ձևն է:

Սուվերեն ժողովուրդը, որն օրենքներ է ընդունում իր համար, դրանով իսկ օրենքին (lex) տալիս է պաշտոնական կարգադրագրերի շրջանակում գերապատիվ տեղ: Այստեղից էլ օրենքը պետք է արտահայտեր հռոմեական ժողովրդի ընդհանուր կամքը, քանզի «օրենքը՝ ժողովրդի հրամանն ու կարգադրությունն է»:

Ըստ հռոմեական իրավական դոկտրինայի օրենքը ապահովում է իրավունքի որոշակիությունը և բացառում է կամայականությունը քաղաքացիների ու կառավարողների կողմից: Օրենքը (lex) որևէ քաղաքական ակտի հանդիսավոր հաստատումն էր, ընտրությունների փաստի արձանագրումն էր, պատվիրակության կամ պաշտոնատար անձի լիազորությունների հավաստագրումն էր: Օրենքը՝ հանրահանուրի, հանրային գործերի բնագավառում ծագած հարաբերությունների իրավական կանոնակարգումն է: Օրենքը՝ իրավական նշանակություն ունեցող հարաբերությունների կարգավորման ընդհանուր կանոններ են, որոնցով պետք է դեկլարվեն անձինք: Օրենքը՝ որոշակի իրավաբանական գործողություններ կատարելու պայմանների կանոնակարգումն է: Եվ, վերջապես, ըստ հռոմեական իրավական դոկտրինայի՝ օրենքի ուժը կայանում էր նրա նորմատիվ-իրավական բովանդակության մեջ, որն արտահայտվում էր տրամադրելու (կարգադրելու), արգելելու, բույլատրելու և պատժելու ձևով:

Օրենքը պետք է բովանդակեր անհրաժեշտ տարրեր՝ ներածություն, դիսպոզիցիա (ragatio) և սանկցիա (sanctio):

Ներածությունում շարադրվում էին օրենքն ընդունելու հանգամանքները (շարժառիթները), rogatio-ն օրենքի կարգադրագրերի բովանդակությունն էր, որոնց խախտման դեպքում վրա է հասնում սանկցիան (sanctio): Օրենքների դասակարգման խնդրում վճռական նշանակությունը տալիս էին սանկցիային: Կախված սանկցիայի բովանդակու-

թյունից և բնույթից՝ տարբերում էին օրենքների հետևյալ տեսակները. Leges perfectae (կատարյալ օրենքներ), որոնք ենթադրում էին որևէ արարքի արգելք: Եվ, եթե այդպիսի արարք կատարվում էր, այն համարվում էր անվավեր և, հետևաբար, չէր առաջացնում որևէ իրավական հետևանքներ (օրինակ՝ կտակը, կազմված ոչ օրինական կարգով, անվավեր էր):

Leges minus quam perfectae (ոչ լիովին կատարյալ օրենքներ), որոնք ենթադրում էին որևէ արարքի արգելք կամ իրավական կարգադրագրերի խախտում, սակայն դրա հետևանքով այն սկզբնապես չէին համարում անվավեր, այլ նախատեսում էին կոնկրետ պատիժ տվյալ իրավական նորմը խախտելու համար: Այդպիսիք էին քրեական օրենքների մեծ մասը, ինչպես նաև մասնավոր իրավունքի հարցերի վերաբերյալ որոշ օրենքներ (օրինակ, եթե ժառանգորդն ըստ կտակի ստանում էր ավելի շատ բաժին, քան նախատեսված էր օրենքով, դրա հետևանքով ոչ միայն պակասեցվում էր նրա բաժնեչափը, այլ նաև պարտավոր էր վճարել տուգանք):

Leges imperfectae (ոչ կատարյալ օրենքներ), սրանք ոչ միայն անվավեր չէին համարում կատարված արարքը, այլև չէին նախատեսում որևէ պատասխանատվություն մման արարքների համար: Դրանք գլխավորապես այնպիսի օրենսդրական ակտեր էին, որոնք բովանդակում էին ընդհանուր բնույթի նորմատիվ պահանջներ (օրինակ, իշխանության մարմինների և պաշտոնատար անձանց լիազորությունների մասին օրենքները և, ընդհանրապես, բոլոր հանրային - իրավական ակտերը):

Օրենքներն օժտված էին պարտադրելիության ուժով, այսինքն՝ սուվերեն ժողովրդի կողմից ընդունված օրենքը համապարտադիր էր նրա յուրաքանչյուր անդամի, պետական մարմինների և պաշտոնատար անձանց համար: Հռոմեական իրավական դոկտրինայի համաձայն. «Անօգուտ է հրապարակել օրենքներ, եթե դրանց չեն ենթարկվում»:

Որպեսզի նոր օրենքի ընդունմամբ յուրաքանչյուր անգամ չխախտվի գործող իրավական նորմերի ողջ համակարգը, հռոմեական իրավական դոկտրինան մշակել էր նոր ընդունված օրենքները գործադրելու որոշակի սկզբունքների համակարգ:

Առաջին. որպեսզի օրենքը համապարտադիր ուժ ստանար, այն պետք է հրապարակվեր ի լուր ամենքի, որի համար հատկացվում էին հատուկ մարդաշատ տեղեր¹³:

Երկրորդ. օրենքի ուժը տարածվում էր, որպես կանոն, ապագա ժամանակի վրա, իսկ մինչ այդ առաջացած իրավաբանական փաստերը և հարաբերությունները ենթակա էին կարգավորման՝ նախկին իրավական նորմերով: Բացառիկ դեպքերում

www.journal.lawinstitute.am

թույլատրվում էր օրենքի գործողության հետադարձ ուժը, հասկապես երկարատև իրավահարաբերությունների նկատմամբ (օրինակ, վաղեմության ժամկետների հետ կապված և այլն): Մեխանիկորեն օրենքի հետադարձ ուժով օժտված էին դատավարական բնույթի բոլոր նորմերը: Դատական բոլոր գործերը և վեճերը, անկախ դրանց ծագման ժամանակից, ենթակա էին լուծման նոր օրենսդրական ակտերի հիման վրա:

Երրորդ, որպեսզի օրենքն ընդունվեր հասարակության կողմից և հեղինակություն ունենար, պետք է բխեր այն նախաձեռնողի՝ օրինականորեն ընտրված մագիստրատի իրավասությունից: Որպես կանոն, հռոմեական օրենքները կոչվում էին իրենց նախաձեռնողի (կամ նախաձեռնողների) անունով (օրինակ՝ Կանոզեի օրենքներ, Լիցինիոսի և Սեքստիոսի օրենքներ, Պետելիոսի օրենք, Հորտենսիոսի օրենք և այլն):

Օրենքն ընդունվում էր միայն ամբողջությամբ կամ էլ ամբողջությամբ մերժվում էր: Օրենքի մասնակի փոփոխությունները, որոնք առաջարկված չէին օրինագծի նախաձեռնողի՝ մագիստրատի կողմից, հռոմեական իրավական դոկտրինան և պրակտիկան չէր ընդունում: Մեզ հայտնի հռոմեական 800 օրենքներից առավել նշանակալից են 12 տախտակների աղյուսակը (*Leges duodecim tabularum*):

Տասներկու տախտակների աղյուսակը հիմք դրեց, այսպես կոչված, քվիտորական (*jus Quiritium*) կամ քաղաքացիական իրավունքին (*jus civile*): Քվիտորական իրավունքին էին պատկանում բոլոր այն օրենքները, որոնք ընդունվում էին ժողովրդական ժողովների կողմից: Տասներկու տախտակներն արտահայտում էին հռոմեական ազգային իրավունքը¹⁴: Տասներկու տախտակներում իրավական նորմերը, որպես կանոն, կրում էին ոչ թե դիպվածային (կազուսային), այլ ընդհանրական բնույթ, այսինքն՝ դրանք կոչված էին կարգավորելու տիպային, համանման հարաբերությունները:

Ժամանակի ընթացքում ձևավորվեցին հռոմեական օրենքների երկու տեսակ՝ *lex*-ը, որպես ժողովրդական ժողովի կողմից ընդունված որոշում, որն ուներ բարձրագույն իրավաբանական ուժ և, *plebiscitum*՝ հռոմեական համայնքի պլեբեյական մասի հրամանագիրը կամ կարգադրությունը: Դիկտատոր ընտրված Քվինտոս Հորտենսիոսի օրենքով (258թ. մ.թ.ա.) պլեբսի տրիբուսային ժողովների ընդունած որոշումներն օրենքի ուժ էին ստանում և այլևս Մենատի հաստատման կարիքը չկար:

Հռոմեական իրավական դոկտրինայի համաձայն. «Ո՛չ օրենքները, ո՛չ սենատուս-կոնսուլտները չեն կարող գրվել այնպես, որպեսզի ընդգրկեին բոլոր հնարավոր դեպքերը, այլ (բովանդակում են) միայն առավելապես տեղի ունեցող դեպքերը»: Այս

դոկտրինալ սկզբունքից բխում էր օրենքների մեկնաբանության անհրաժեշտությունը կոնկրետ հանգամանքների վերաբերյալ: Հռոմեական իրավաբանները մշակեցին օրենքների մեկնաբանման (պարզաբանման) ճշգրիտ կանոններ, որի հետևանքով մասն մեկնաբանությունները (պարզաբանումները) իրավակիրառ պրակտիկայում դառնում էին պարտադիր, մանավանդ, երբ մեկնիչները հեղինակավոր իրավաբաններ էին:

Թույլատրվում և ցանկալի էր օրենքի մեկնաբանումն ըստ նրա ոգու, այլ ոչ թե տառի, որի հիմնական նպատակն էր իրավակիրառ պրակտիկայում սուբյեկտիվիզմի բացառումը: Ըստ հռոմեացի իրավաբանների, «*scire leges non hoc est verba carum tenere, sed vim ac potestatem*» («օրենքների իմացությունը չի նշանակում կառչել նրանց տառերից, այլ (հասկանալ) նրա ուժն ու նշանակությունը»):

Ըստ այդմ էլ, հռոմեական իրավական դոկտրինան մշակել է որոշակի սկզբունքներ, որոնք անհրաժեշտ էին պահպանել օրենքների մեկնաբանման (պարզաբանման) ընթացքում: Այդ սկզբունքներն են՝

ա) օրենքները պետք է մեկնաբանվեն ոչ թե տառացիորեն, այլ դրանց ընդհանուր իմաստից և նշանակությունից ելնելով, որոնք հնարավորություն կտան բացահայտել օրենսդրի կամքը,

բ) եթե մույն օրենքի դրույթներն տարիմաստ են կամ մույնիսկ հակասական, անհրաժեշտ է վերլուծել բոլոր իրավիճակները և դրա հիման վրա կատարել կոնկրետ եզրահանգումներ,

գ) օրենքները պետք է մեկնաբանվեն այնպես, որպեսզի չխախտվեն մասնավոր անձանց և կորպորացիաների իրավունքներն ու շահերը:

Օրենքի մեկնաբանումը (պարզաբանումը), որն ուղեկցվում էր նշված չափանիշներով կամ սկզբունքներով, ձեռք էր բերում պարտադիր գործողության ուժ: Նման մեկնաբանությունները մաս կիսեին հանդիսանում գործող օրենքների փոփոխության կամ նոր օրենքի ընդունման համար:

Հռոմեական օրենսդրությունը, իրավունքի և օրենքների տեսական հայեցակարգերը հսկայական ազդեցություն ունեցան իրավունքի հետագա զարգացման, մայրցամաքային իրավական համակարգի ձևավորման, իրավունքի ինստիտուտների և ճյուղերի կազմավորման վրա:

Այս խնդրում էական նշանակություն ունեցավ հռոմեական իրավունքի ռեցեպցիան (փոխառումը, ընդօրինակումը):

¹ Տե՛ս, Графский В.Г. Всеобщая история права и государства. М., 2016, С. 43.
² Տե՛ս, Чистое учение о праве Ганса Кельзена. Вып. 1, М., ИНИОН АН СССР, 1987, С. 21-22.
³ Սովորութային իրավունքի մասին մանրամասն Տե՛ս, Коваловский М.М. Первобытное право. Вып. 1-2, М., 1886.
⁴ Մանրամասն տես՝ Ударцев С. Ф. История политических и правовых учений (Древний Восток). СПб., 2007, Томсинов В. А. Государство и право Древнего Египта. М., «Зерцало-М», 2011, Ավագյան Ռ-ուրեն, Հայ իրավական մտքի գանձարան (մ.թ.ա. IXդ. – մ.թ.ա. XIXդ.): Երևան, 2001թ.:
⁵ Հրեական իրավունքի մասին մանրամասն տես՝ Менахем Элон, Еврейское право. Санкт-Петербург, 2002; Примаков Д. Я. История еврейского и израильского права. М., 2015:
⁶ Հունական իրավունքի և իրավաբանական ուսմունքների մասին տես՝ Սաֆարյան Գ., Եսայան Ա., Հռոմեական իրավունք, Երևան, 2012թ.:
⁷ Տե՛ս, Римское частное право. “Учебник, Под ред. проф. И. Б.Новицкого и проф. И.С.Перегерского. - М.: “Юристь”, 1996, С. 3.
⁸ Տե՛ս, Римское частное право (конспект лекций). М.: Издательство “ПРИОР”, 2000, С. 4:
⁹ Տե՛ս, Омельченко О.А. Римское право. Учебник. М., 2000, С. 15.
¹⁰ Տե՛ս, Омельченко О.А. Римское право. Учебник. М., 2000, С. 9-10.
¹¹ Տե՛ս, Омельченко О.А. Римское право. Издание второе, исправленное и дополненное. М., 2000. С. 15.
¹² Տե՛ս, Дождев Д.В. Римское частное право. Учебник для вузов. Под ред. проф. В.С.Нерсисянца. М., 1996, С. 82-83.
¹³ Մանրամասն տես՝ Лафитский Владимир, Воскресение права. М., 2008:
¹⁴ Տե՛ս, Скрипилев Е.А. Основы римского права. Конспект лекций. М., 2000:

Լիլիտ Մուրադյան

Соискатель отдела государственно-правовых исследований
института философии, социологии и права Национальной
Академии Наук Республики Армения

РЕЗЮМЕ

Исторический очерк мирового опыта в нормотворческой деятельности

В статье автор тщательно проанализировал положительный опыт законодательной деятельности накопленной в ходе исторического развития, а также способы возможного использования достижений мировой практики законодательной деятельности в области национальной нормотворческой деятельности.

Ключевые слова: правовая деятельность, мировой опыт, источник права, право, законотворчество, правоохранительная деятельность, судебная практика.

Lilit Muradyan

Applicant to National Academy of Sciences of the
Republic of Armenia, Institute Philosophy, Sociology
and Law, Department of State and Legal Studies

SUMMARY

Historical Review of Global Experience in Regulatory Practice

In the article, the author has undergone a thorough analysis of the positive experience gained during the historical development of lawmaking activities, as well as the ways in which the possible use of the achievements of the world practice of law making activities in the field of national law making activity.

Key words: legal activity, global experience, source of law, determination of law, legal practice, judicial practice.